— Բայց դու չես գիտէր մեր վիճակը, Յովնան, դու չես գիտէր թէ այս նախարարները՝ եթէ ես վաղը ոտք ելնեմ ամէնքը կը միաբանին Բուղայի հետ զիս ջախջախելու համար:

— Ինչպէս, դու ուրեմն կը միաբանիս Բուղայի հետ ջախջախելու համար զիրե՞նք,— ըսաւ Յովնան իւր աչքերուն սոսկալի փայլով եւ ոտք ելաւ դէպի դուռը:

— Կա՛ց, ո՞ւր կ'երթաս. այսպէս շուտով կը դատապարտես մարդը, դու որ քիչ առաջ դորայ հակառակը կը պնդէիր:

— Կը ներես, իշխան, ես ոչ իշխանազուն եմ եւ ոչ ազնուատոհմ. ես քիչ առաջ ըսի թէ ինչ եմ:

— Կ'իմանամ ինչ ըսել կ'ուզես. դու այդ արհամարհութեամբ ընդդէմ նախարարական ցեղին՝ վեր կը համարիս քու շինական ծագումդ:

— Կրնա՞ս տարակուսիլ այդ բանին վրայ, երբ դու կը խոստովանիս թէ այդ նախարարք՝ երբ դու ոտք ելնես ազգդ կանգնեցնելու՝ ամէնքը Բուղայի հետ կը միաբանին զանի կորէանելու:— Թո՛ղ ուրեմն, որ իմ ազդիս հետ լինիմ, վասնզի նա էլ ինձ պէս շինական, սինլքոր՝ սոսկական լեռնական է:

— Բայց կա՛ց:

— Ի՛նչ կենամ, երբ իմ առաջարկութիւնս ընդունելու չափ քաջութիւն չունիս:

— Դու ինչչա՞փ ժամանակ է այս մտածութիւնը յղացար, գոնէ այն զրուցէ:

— Համարեա թէ ամիս մը:

— Ինչպէ՞ս կ'ուզեմ, որ ես վայրկենի մը մէջ առանց մտածելու՝ այդպիսի ծանր որոշողութիւն մը յանձն առնում: